ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմը հայտարարում է նոր մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական **«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն»** փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. Բարձրագույն բժշկական կրթություն և հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

2. Մրցույթը կանցկացվի 2023 թվականի հուլիսի 21-ին ժ. 11^{00} -ին:

3. Մրցույթին մասնակցելու համար դիմումատուները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան են ներկայացնում՝

1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), հաշվառման և բնակության վայրը, հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

4) ինքնակենսագրություն.

5) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.

6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ (Արտաքին գործերի նախարարությունից).

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ (Պետական եկամուտների կոմիտեից).

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ. (արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմումատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12) Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

4. Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

5. Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2023 թվականի հունիսի 21-ը:

Մրցույթը կկայանա Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի շենքում (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր քաղաք, Աբովյան 71): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր քաղաք, Աբովյան 71, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի անձնակազմի

կառավարման բաժին, 0237 21629, էլեկտրոնային հասցե՝ armavir.andznakazmi.karavarum@gmail.com):